

Գարձեալ, իր Թաղուելիք եկեղեցիին կը Թողու իր մատրան բոլոր զարդերը, այսինքն՝ զգեստներ, սկիհներ, խաչեր, մասնատուփեր, մասունքներ եւ իր մատրան պատկանող ուրիշ բոլոր առարկաները: Այն պարագային երբ ո եւ է վէճ պատահի, իր յիշեալ կտակակատարներուն կարգադրութիւնով Թող լուծուի վէճը:

Նոյնպէս, St. Nicolas des Champs եկեղեցիին սնտուկին, ժողովրդապետին ու քահանաներուն կը Թողու չորս պարիսեան ոսկի, այն է՝ պարիսեան քառասուն սուղ նոյն եկեղեցիի յիշեալ սնտուկին, եւ քառասուն սուղ յիշեալ ժովրդապետին ու քահանաներուն, որպէս զի կտակարարին հոգիին համար աղօթեն առ Աստուած:

Նոյնպէս, Պարիսի Notre Dame եկեղեցիին կը Թողու երեք Ֆրանկ ոսկի:

Նոյնպէս, Պարիսի Hotel-Dieu հիւանդանոցին կը Թողու հինգ Ֆրանկ, իր դիակին վրայ հսկում մը կատարելու համար:

Նոյնպէս, Պարիսի Սէն-Դընի փողոցին մէջ գտնուած Ste. Catherine հիւանդանոցին կը Թողու չորս Ֆրանկ, իրենց եկեղեցիին մէջ հսկում, ձայնաւոր պատարագ եւ հոգեհանգիստ մը կատարելու համար:

Նոյնպէս, Պարիսի Sépulcre հիւանդանոցին կը Թողու չորս Ֆրանկ ոսկի, կտակարարիս դիակին վրայ հսկում մը եւ նոյն հիւանդանոցին մէջ հանդիսաւոր պատարագ կատարելու համար:

Նոյնպէս, Պարիսի St. Jacques հիւանդանոցին կը Թողու երեք Ֆրանկ, իր դիակին վրայ հսկում մը կատարելու համար:

Նոյնպէս, Պարիսի Quatre ordres Mendians (Quatres ordres Mendians) Ուխտերէն — այսինքն՝ Կորդելեանց, Կարմեղեանց, Յակոբեանց եւ Աւգոստինեանց — իւրաքանչիւրին կը Թողու հինգ-հինգ Ֆրանկ, իր դիակին վրայ հսկում մը կատարելու համար:

Նոյնպէս, Պարիսի Sts. Innocents գերեզմանոցին Ոսկերատան սընտուկին կը Թողու երեք Ֆրանկ:

Նոյնպէս, Պարիսի Բիլլէսներու, ս. Խաչի, Սպիտակ Կրկնոցաւորներու եւ Դպրոցականաց Հովտի ս. Կատարինէի (Ste. Catherine du val des Escoliers) կրօնաւորներէն իւրաքանչիւր Ուխտին կը Թողու երեք-երեք Ֆրանկ ոսկի, յիշեալ կտակարարին դիակին վրայ հսկում մը կատարելու համար:

Նոյնպէս, Պարիսէն դուրս բնակող Կարդուսեան կրօնաւորներուն կը Թողու հինգ Ֆրանկ, իրենց եկեղեցիին մէջ հսկում, հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ մը կատարելու համար:

Գարձեալ, նոյն կտակարարը կը փափագի եւ կը պատուիրէ, որ իր բոլոր շարժական եւ անշարժ ստացուածքն որ ունի եւ պիտի ունենայ մեռած օրը՝ ծովէն ասդին ո՛ր տեղն ալ ըլլայ՝ չորս հաւասար մասերու բաժնուին, իր կտակակատարներուն կամքին եւ կարգադրութեան